600.0478.06.11.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 նոյեմբերի 2017 թվականի №478Ն
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի №79Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի հունիսի 24-ի «Ոռոգման ջրի մատակարարման ծառայությունների մատուցման սակագների մշակման մեթոդաբանությունը հաստատելու մասին» №79Ն որոշման վերնագրում, 1-ին կետում, հավելվածի՝ ոռոգման ջրի մատակարարման ծառայությունների մատուցման սակագների մշակման մեթոդաբանության (այսուհետ՝ Հավելված) վերնագրում, 2.5 և 2.7 կետերում «մեթոդաբանություն» բառը և դրա հոլովաձևերը փոխարինել «մեթոդիկա» բառով և դրա հոլովաձևերով:

2. Հավելվածի՝

1) 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն մեթոդիկան սահմանում է ոռոգման ջրի մատակարարման ծառայություններ (այսուհետ՝ Ծառայություններ) մատուցող անձի (այսուհետ՝ Անձ) կողմից ջրօգտագործողների ընկերություններին, ջրօգտագործողների ընկերությունների միություններին և այլ ջրօգտագործողներին (այսուհետ՝ Սպառողներ) մատուցվող ծառայությունների սակագնային համակարգի մշակման սկզբունքները: Սույն մեթոդիկան չի տարածվում ջրօգտագործողների ընկերությունների, ջրօգտագործողների ընկերությունների միությունների, համայնքների, համայնքային բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների կողմից,

ինչպես նաև բացառապես սեփական կարիքների համար ոռոգման ջրի մատակարարման հետ կապված հարաբերությունների վրա:».

2) 1.1, 2.1, 2.4, 2.5, 2.7, 2.9, 3.2, 3.3 և 3.4 կետերում «Ընկերություն» բառը և դրա հոլովաձևերը փոխարինել «Անձ» բառով և դրա հոլովաձևերով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐՈՒՅԹԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
6 նոյեմբերի 2017թ.